զնորա մայրն էր առեր՝ օտալըխ և խասէքի Իպրա-
հիմին. և բազում աղերսանօք պրծուցին զնա փեսան
և խորթ[1]) դուստրն իւր։ Եւ յորմէ հետէ այս բանք
գործեցաւ, զդրունս այնոցիկ որք ի տէֆտէրին էին՝
պահէին զգուշութեամբ չօրպաճիք հանդերձ իւրայ-
նօքն թէ գտանիցեն, և զդրունսն կնքած։ Քաղաքս
ամենայն մեծ եւ փոքր ի հիացման եւ ի դող ելեալ
երկնչէին եւ իմացեալ[2]) ապուշ մնային. եւ Ը-երորդ
ժամուս գնացեալ խաղաղացան սակաւ։

Իսկ յառաւօտեան պահուս Գշի օր (26 Փէբր.) չա-
ւուշպաշին ոչխար ժե մատաղ արարեալ. եւ լուան
զայս զօրքն և զօրագլուխքն թէ նա պրծաւ կրկին,
գումարեցան եւ ժողովեցան անդ ի յէթմէյտանն եւ
պատրաստեցան որպէս թէ վառելով ի պատերազմ,
այնպէս բազմամբոխիւ ելեալ գնացին ի պալատ թա-
գաւորին, եւ գնացեալ հրեշտակքն եւ զօրագլուխքն
թագաւորին թէ Հրամանքդ չասացի՞ր թէ տամ զձեր
ուզածն, և ասացիր թէ Փտէք զփախուցեալքն, և ա-
հա հրամանքդ զչաւուշպաշին զերծուցեալ ես երեւ
տալով նմա. եկեալ եմք այսր եւ զնա ուզող եմք.
ես և ուզողք եմք որ կայ ի տէֆտէրին՝ անյապաղ
բազում խօսիւք։ Եւ թագաւորն երդում արարեալ
թէ Նոքա ի կորուստ են և չը կան, գտայց զնոսա և
տաց ի ձեռս ձեր. դուք գնացէք խաղաղութեամբ։
Եւ ի նմին ժամու խեղդամահ արարեալ զչաւուշպա-
շին ի ներսն եւ տվեալ ի ձեռս զօրացն. և բերեալ
զնա կախեցին գլխիվայր ի նոյն տեղին եւ ի ծառն
յորում եւ ներքինեաց գէշքն էին, եւ զգլուխն
կտրեալ եւ ի մորուացն ի ձեռն կապեալ՝ զգլուխն
ի կախ։ Եւ օրս մունետիկն աղաղակէր ի քաղաքս
թէ Ով ոք որ զփախուստ և զկորստական մարդիկքն

1) խորդ. 2) յիմացեալ.